ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2022/71

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
15 սեպտեմբերի 2022 թ. N 71

«ԷՐԵԲՈՒՆԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Էրեբունի., Տիտոգրադյան փող. 133

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022թ.սեպտեմբերի 15-ին քննարկեց «Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամի միջին մասնագիտական կրթական աստիճանի (այսուհետ՝ ԷԲԱ, Ակադեմիա, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	25 օգոստոսի 2021 թ.
ինքնավերլուծության ներկայացում	19 մայիսի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում	06-08 հուլիսի 2022թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	30 օգոստոսի 2022 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	05 սեպտեմբերի 2022 թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ **«Հասարակական պատասխանատվություն»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Էրեբունի» բժշկական ակադեմիայի կողմից ներկայացված միջին մասնագիտական կրթական աստիճանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում**

ԷԲԱ-ում գործող մասնագիտական կրթական ծրագրերը (ՄԿԾ) համահունչ են պետական կրթական չափորոշիչներին: Կիրառվում են դասավանդման և ուսումնառության տարբեր մեթոդներ՝ որոնց մի մասը բավականին արդիական են և առաջադեմ: Գործող ՄԿԾ-ները վերանայվել են, ավելացել են գործնական պարապմունքներին և պրակտիկաներին հատկացվող ժամաքանակները, ինչն ապահովում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գործնական կարողություններ և հմտություններ ունեցող մասնագետների պատրաստումը: ԷԲԱ-ում առկա է հստակ քաղաքականություն և սահմանված են ուսանողների գիտելիքների գնահատման և բողոքարկման ընթացակարգեր:

Ակադեմիան կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության գործուն մեխանիզմ՝ պրոֆեսորադասախոսական կազմն աշխատանքի է ընդունվում հարցազրույցով: Բացի հիմնական դասավանդողներից, Ակադեմիայում որպես համատեղությամբ դասավանդող հրավիրվում են նաև գործնական մեծ փորձ ունեցող ոլորտի պրակտիկ մասնագետներ տարբեր բժշկական և մասնագիտացված այլ հաստատություններից: Հրավիրյալ դասախոսները հիմնականում հանդիսանում են նաև գործատուներ: Դասավանդման հմտությունների ձեռքբերման համար Ակադեմիայում գործում է «Սկսնակ դասախոսների դպրոց», որտեղ սկսնակ դասավանդողներին և պրակտիկ բժիշկներին տրվում է խորհրդատվություն ուսումնական գործընթացի կազմակերպման, դասավանդման և մատենավարության վերաբերյալ:

Դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար մշակվել են գնահատման չափանիշներ, վարկանշային գնահատման համակարգ, ներդրվել է նաև «ՄՈՒՀ-ի ղեկավար և մանկավարժական

աշխատողների խրախուսման և գնահատման ուղեցույց»: Սակայն դասախոսները մեծամասամբ տեղյակ չեն վարկանիշային գնահատման արդյունքներից և ֆինանսական խրախուսումներ չեն ստացել: Հստակ կանոնակարգված չէ նաև դասախոսական կազմի գնահատման հաճախականությունը: Ակադեմիայի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմը սակավաթիվ է, և առկա է պարտականությունների անհավասարաչափ բաշխում:

ԷԲԱ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, իսկ ռեսուրսային բազան նպաստավոր պայմաններ է ստեղծում առաքելության, ռազմավարական ծրագիրն իրականացնելու համար:

Ակադեմիայում գործող կրթական ծրագրերը, ՊԴ կազմն ու նյութատեխնիկական հագեցվածությունն ընդհանուր առմամբ ապահովում են արդի, գործնական հմտություններով, ՈԱՇ-ի և գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը:

2. *Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:*

ԷԲԱ հիմնադրամը մշակել և իրագործում է իր առաջին ռազմավարական ծրագիրը, որում սահմանված են առաքելությունն ու հիմնախնդիրները: ԷԲԱ հիմնադրամի առաքելությունը և նպատակները համապատասխանում են ՈԱՇ-ին, նրանց իրականացման համար կատարվում են համապատասխան գործողություններ: ԷԲԱ հիմնադրամի ծավալած գործունեությունը համապատասխանում է որդեգրած առաքելությանը: Ակադեմիան, լինելով նորաստեղծ ուսումնական հաստատություն, դեռևս չի իրականացնում առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների վրա հիմնված ռազմավարական կառավարում:

ԷԲԱ-ն ապահովված է մարդկային և նյութական ռեսուրսներով, ունի հիմնարար բազա, արտաքին շահակիցներն ակտիվորեն ներգրավված են հաստատության կառավարման և ուսումնական գործընթացում: Սակայն ակադեմիայի կառուցվածքը բարելավման կարիք ունի ստորաբաժանումների միջև կապերի հստակեցման և վարչական կազմում նոր հաստիքների ներդրման առումով:

ԷԲԱ-ում Որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը դեռևս ներդրված չեն, նկատելի է տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմների ոչ լիարժեքությունը: Առկա է ԷԲԱ-ի գործընթացների արդյունավետության ուսումնասիրման և վերլուծությունների պակաս, ինչպես նաև դրանց որակի վերաբերյալ տեղեկատվության ոչ բավարար հասանելիություն:
Որակի ապահովման համակարգը դեռևս չի ձևավորվել այնքան, որ կարողանա խնդիրներ վերհանել և նպաստել հաստատության զարգացմանը:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.*

Ակադեմիայում որոշակի չափով առկա է հետազոտական, ստեղծագործական միջավայր: ԷԲԱ-ն հետազոտության և զարգացման ոլորտում մշակել է սեփական հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն, ունի կարճաժամկետ ծրագրեր, իրականացնում է քայլեր ուսանողներին և դասախոսներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար: Ակադեմիան կարևորում է բժշկական նորամուծությունների քննարկումը և ներդրումն ուսումնական գործընթացում:

ԷԲԱ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգի բարելավման կարիք, ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության հասարակության հասանելության ցածր աստիճան:
Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները համակարգված չեն, հստակեցված չեն հասարակության հետ համագործակցության ուղղությունները, հետևաբար նվազում է Ակադեմիայի կողմից ներքին և արտաքին շահակիցների կարիքներին արձագանքելու հնարավորությունը: Թեև հասարակությանը գիտելիքի փոխանցման գործընթացի շրջանակներում իրականացվում են որոշակի միջոցառումներ, սակայն այդ գործընթացները կանոնակարգված չեն, հստակ մեխանիզմներ առանձնացված չեն:

ԷԲԱ-ն իրականացնում է միջազգայնացմանն ուղղված հստակ գործընթացներ, ունի սահմանված նպատակներ:

Ակադեմիան ապահովում է ներքին շահակիցների ակտիվ մասնակցությունը միջազգային առցանց կազմակերպվող սեմինարներին, վեբինարներին և կոնֆերանսներին: Միջազգային կապերն օգտագործվում են դասապրոցեսների կազմակերպումն առավել արդյունավետ դարձնելու համար: Գործատուների հետ հետադարձ կապերը հնարավորություն են ստեղծում առավել պրակտիկ գիտելիքների փոխանցման համար: Դասախոսների փորձի փոխանակմանը, պրակտիկաների իրականացման համար Ակադեմիան համագործակցում է տեղական ԲԿ-ների և մասնագիտացված կառույցների հետ, նախատեսում է արտասահմանյան կառույցների հետ պայմանագրերի կնքում և գիտակցում է օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը:

ԷԲԱ-ն ունի ուսանողների հավաքագրման, ընտրության, ընդունելության հստակ մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմեր և ուղիներ, ուսանողները հնարավորություն ունեն խորհրդատվություն ստանալու նպատակով դիմել ինչպես դասախոսական, այնպես էլ վարչական աշխատակազմին: Ակադեմիան ունի Ուսանողական խորհուրդ, ինչպես նաև կարիերայի ուղղորդման կենտրոն:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, հիմքեր ստեղծված են բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն ըստ էության ներառում է փորձագետների կողմից տրված հիմնական խորհրդատվությունները: Ծրագիրը իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամին (միջին մասնագիտական կրթական աստիճան) շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4/չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու մասին որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Հասարակական պատասխանատվություն»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծման և դրանց կիրառմանը որոշումների կայացման գործընթացում,
   - շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծմանը,
   - նախասիրական ու ընտրովի դասընթացների բազմազանեցմանն ու իրականացմանը,
   - այլընտրանքային ֆինանսական միջոցների հայթայթմանը,
   - բոլոր ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի ներդրմանը և հետազոտության խրախուսմանը,
   - որակի մշակույթի ձևավորմանը և շարունակական զարգացմանը, Ակադեմիայի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
   - միջազգայնացման և արտաքին կապերի զարգացմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումները, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկել «Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. սեպտեմբերի 23
ք.Երևան